23.02.2018թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան համաքաղաքացիներ

Անկախ ժամանակներից, հասարակական-քաղաքական փոփոխություններից, տոնացուցային տեղաշարժից, մեր կյանքում և առօրյայում իր տեղն ունի փետրվարի 23-ը, որը նշվում է որպես Հայրենիքի պաշտպանի օր:

1992թ. մեր նորանկախ հանրապետությունը դժվարին ու բարդ իրավիճակում, պատերազմական թոհուբոհի մեջ ստեղծեց իր բանակը, ու հունվարի 28-ն էլ դարձավ նրա ծննդյան օրը: Արդեն 26 տարի այդ օրը նշում ենք մարտունակ ու կայացած բանակ ունեցողի հպարտությամբ:

Չնայած այս իրողությանը՝ մեր կողքին ապրող մեծահասակների ու տարեցների համար փետրվարի 23-ն այլ խորհուրդ ունի, որն ամփոփվում է բանակային առաջին մկրտությամբ, Հայրենականի բովով անցնելու թանկ ու նվիրական հիշողություններով, դժվարություններով ու հաղթանակներով:

Փետրվարի 23-ը նրանց տոնն է, ովքեր ծառայել են խորհրդային բանակում, և այդ օրը նրանց կյանքում ունի յուրահատուկ խորհուրդ՝ ամփոփված երիտասարդական անմոռանալի հիշողություններով:

Ես վստահ եմ, որ և' երեկ, և' այսօր հայրենիքի պաշտպան է մեզանից յուրաքանչյուրը՝ դիրքերում կանգնած զինվորն ու հրամանատարը, իր աշխատանքի նվիրյալը, բարիք արարող ու երկիր շենացնող մարդը, հերոսներ ծնող մայրը, փորձություն և դժվարություն հաղթահարող յուրաքանչյուր քաղաքացի, ում համար հայրենասիրությունը կոնկրետ գործողություն է:

Հայրենիքի պաշտպան լինելը պատիվ է և մեծ պատասխանատվություն, և օրն էլ նրանցն է, ովքեր այդ արժեքների կրողն ու տարածողն են:

Հարգելի համաքաղաքացիներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիդ Հայրենիքի պաշտպանի օրվա առթիվ, մաղթում առողջություն, ապահով, բարեկեցիկ և խաղաղ կյանք: